600.0406.31.10.18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2018 թվականի №406Ա
քաղ. Երևան

«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ «ՆԱԽԸՆՏՐԵԼԻ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՁԵՂՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի օգոստոսի 28-ի №335Ա որոշմամբ «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի (այսուհետ՝ «Նախընտրելի» սակագնային փաթեթ) բաժանորդային վճարը սահմանվել է 1300 դրամ/ամիս (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը),

բ) Ընկերությունը, համաձայն իր պաշտոնական ինտերնետային կայքում (http://beeline.am/) հրապարակված տեղեկատվության, «Նախընտրելի» սակագնային փաթեթը մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը բաժանորդներին (հաճախորդներին) առաջարկել է 1100 դրամ/ամիս բաժանորդային վճարով՝ Հանձնաժողովի սահմանած սակագնի նկատմամբ կիրառելով 200 դրամի չափով զեղչ,

գ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սակագնային կարգավորման ենթակա ծառայության սակագնի զեղչումը կարող է կիրառվել Հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո,

դ) Ընկերությունը «Նախընտրելի» սակագնային փաթեթի բաժանորդային վճարը զեղչելու վերաբերյալ առաջարկություն չի ներկայացրել Հանձնաժողով և զեղչը կիրառել է առանց Հանձնաժողովի հաստատման,

ե) Հանձնաժողովը 2018 թվականի հոկտեմբերի 3-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված դրույթի խախտման

փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությանը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 3-ի №ԱԲ-2740Ս գրությամբ,

զ) Ընկերությունը 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №396/18-И11 գրությամբ հայտնել է, որ զեղչված 1100 դրամ/ամիս բաժանորդային վճարի կիրառումը պայմանավորված է տեխնիկական խնդիրներով, այն է՝ նոր ներդրված համակարգի տեխնիկական թեսթավորման ընթացքում հայտնաբերված խնդիրները թույլ չեն տվել «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի համար գործընթացը լիարժեք ավտոմատացնել և միակ լուծումը եղել է «Բազային» սակագնային փաթեթի վրա բաժանորդների նախկին բաժանորդային վճարի պահպանումը՝ «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի հավելյալ ծառայությունները ակտիվացնելով: Հաշվի առնելով նշվածը՝ Ընկերությունը խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը և «Նախընտրելի» այլընտրանքային սակագնային փաթեթի զեղչված բաժանորդային վճարը սահմանել 1100 դրամ/ամիս (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը գործողության ժամկետով,

է) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերության կողմից խախտվել է Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը և վերջինիս ներկայացրած պարզաբանումները վարչական վարույթի կարճման հիմք չեն,

և հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածը և 63-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի խախտման համար Ընկերությանը տուգանել երկու միլիոն դրամ գումարի չափով:
2. Հաստատել «Նախընտրելի» սակագնային փաթեթի զեղչված բաժանորդային 1100 դրամ/ամիս (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) վճարը՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝
   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

      ա. սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու սույն որոշումը.

      բ. սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
31 հոկտեմբերի 2018թ.